ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԾԱՆՈՒՑՈՒՄ ՈՒՂՂՎԱԾ CALFRESH ԾՐԱԳՐԻ ՄԱՄՆԱԿԻՑՆԵՐԻՆ ԿԱՐԵՎՈՐ Է – ԽՆԴՐՈՒՄ ԵՆՔ ԿԱՐԴԱԼ

Այս ծանուցումը միայն տեղեկատվության համար է: Որևէ գործողություն ձեռնարկելու կարիք չկա:

Նահանգային օրենքի փոփոխություն CalFresh ստացողների համար

Դուք ստանում եք այս ձևը, քանի որ դուք փոփոխություն զեկուցող ընտանիք եք:

Սկսած 07/01/2016 (ԱՄՍԱԹԻՎ), դուք այլևս չեք լինի փոփոխություն զեկուցող ընտանիք: 06/30/2016 (ԱՄՍԱԹԻՎ)- ից հետո, դուք կլինեք կիսամյակային հաշվետվություն ներկայացնող ընտանիք: Սա պետական օրենքի փոփոխության հետևանքն է:

Ի՞նչ է սա նշանակում

Սկսած 07/01/2016 (ԱՄՍԱԹԻՎ), դուք այլևս պարտավորված չեք 10 օրվա ընթացքում հաղորդել բոլոր փոփոխությունները ձեր աշխատողին:

Ձեզնից պահանջվելու է հաղորդել միայն այն դեպքում, երբ ձեր եկամուտը անցնում է որոշակի չափը: Մարզը ձեզ կասի այդ գումարը, երբ փոփոխությունը տեղի ունենա:

Բացի այդ, դուք պետք է ներկայացնեք ձև, որը կոչվում է՝ SAR7 Eligibility Status Report: Մենք այդ ձևը ձեզ կուղարկենք, երբ այն վերադարձնելու ժամանակը գա:

Ի՞նչ պետք է ես հիմա անեմ

Մինչև 06/30/2016 (ԱՄՍԱԹԻՎ), դուք դեռ պետք է 10 օրվա ընթացքում բոլոր փոփոխությունները զեկուցեք ձեր աշխատողին:

Ինչպե՞ս այս կփոխի ձեր նպաստները

Դա չի փոխի ձեր նպաստների չափը: Ձեր նպաստների հաշվարկը կշարունակվի նույն կերպ:

Որտե՞ղ կարող եմ ստանալ լրացուցիչ տեղեկություն

Եթե ցանկանում եք հավելյալ տեղեկություն այս փոփոխության վերաբերյալ, կարող եք զանգահարել կամ այցելել ձեր մարզային գրասենյակը: